

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ****ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ****«ԼՈՅՍԻ» ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Սուրբ Յարութեան տօնէն առաջ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը ստիպւած է սոյն յայտարարութիւնը հրապարակել՝ իր հաւատացեալներուն տեղեկացնելու այն սահմանափակումներու մասին, որոնք Իսրայէլի ոստիկանութիւնը կը փորձէ պարտադրել այս տարի:

Ապրիլ 11-ին, Պատրիարքութեան ներկայացուցիչները հանդիպում ունեցան «Լոյսի» արարողութեան պատասխանատու ոստիկաններուն հետ, որուն ընթացքին վերջիններս տեղեկացուցին, թէ այս տարի պէտք է ընդամէնը 1000 ուխտաւորներու արտօնուի՝ մասնակցիլ արարողութեան, որոնցմէ միայն 200-ը հայեր պէտք է ըլլան: Մեր ներկայացուցիչները իրենց անհամաձայնութիւնը յայտնեցին եղած նոր որոշման եւ լքեցին ժողովը:

Հայ Առաքելական Եկեղեցին բացառիկ իրաւունքներ ունի «Լոյսի» արարողութեան ընթացքին, որոնք արձանագրուած են Status Quo-ի համաձայնագրին մէջ:

«Լոյսի» արարողութիւնը սկսելու համար Հայ Եկեղեցւոյ իրաւունքն է բանալ Սուրբ Յարութեան տաճարի դուռը, որուն կը մասնակցին հարիւրաւոր հայ եւ օտար ուխտաւորներ՝ ականատես ըլլալով այդ բացառիկ արարողութեան: Այս Երուսաղէմի Հայ Պատրիարքը, կրկին հարիւրաւոր ուխտաւորներու ուղեկցութեամբ, հանդիսաւոր մուտք կը գործէ տաճար, որմէ ետք իր ներկայացուցիչը՝ Երուսաղէմի Յոյն Պատրիարքին հետ կը մտնէ Սուրբ Գերեզման դուռս բերելու Քրիստոսի Յարութիւնը խորհրդանշող «Լոյս-Կրակը»:

Վերոնշեալ իրաւունքները դարեր շարունակ տարբեր իշխանութիւններու եւ տիրակալներու շրջանին իրագործուած են առանց որեւէ սահմանափակումի: Ուստի, սոյն յայտարարութեամբ մեր անհամաձայնութիւնը կը յայտնենք Իսրայէլի ոստիկանութեան սահմանափակումներու որոշման դէմ եւ կը պահանջենք, որ այս տարի եւս, նախորդ տարիներու նման, «Լոյսի» արարողութիւնը կատարուի առանց հաւատացեալներու թուի կրճատման:

Իսրայէլի կառավարութիւնը միջազգային պարտաւորութիւն ստանձնած է ապահովելու կրօնական արարողութիւններու ազատութիւնը եւ կազմակերպելու անոնց անխափան անցկացումը: Մեր պահանջն է, որ ոստիկանութիւնը յարգէ այս յաճառութիւնը եւ չեղեալ նկատէ սահմանափակումներու վերաբերեալ իր առած որոշումը:

12 Ապրիլ, 2022

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

ԵՐԿՐՈՐԴ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ «ԼՈՅՍԻ»

«Լոյսի» արարողութեան վերաբերեալ Իսրայէլի ոստիկանութեան որոշած սահմանափակումներու դէմ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան տարածած յայտարարութեան հրապարակումէն երկու օր վերջ Հին քաղաքի ոստիկանատան քրիստոնեաներու բաժնի պատասխանատու սպան հեռաձայնով Ս. Աթոռոյս Դիւանապետին տեղեկացուց, որ արարողութեան հայ մասնակիցներու թիւը 200-ի փոխարէն 450-ի

բարձրացուած է: Պատրիարքարանը իր անհամաձայնութիւնը յայտնեց նաեւ այս թուի վերաբերեալ եւ անմիջապէս ձեռնարկեց իրաւատէր համայնքներու հետ միասնաբար բողոք-նամակ խմբագրելուն:

18 Ապրիլ, 2022-ին, իրաւատէր երեք համայնքներու հոգեւոր պետերը, Երուսաղէմի Հայ պատրիարքը, Երուսաղէմի Յոյն ուղղափառ պատրիարքը եւ Սուրբ Երկրի Քուստոտը հետեւեալ միասնական նամակը ղրկեցին Իսրայէլի մեծարգոյ նախագահ՝ Տիար Իսահակ Հերցոկի.

His Excellency the Honorable Isaac Herzog
President of Israel
Jerusalem
Your Excellency,

We send you our warm greetings and hope that our letter reaches Your Excellency in good health.

We are jointly writing this letter in regard to the unacceptable proposed restrictions and fixed number of attendees for the Easter celebrations.

On April 11, 2022, churches in Jerusalem were informed by the Police that only 1,000 Christian faithful would be allowed to enter the Church of the Holy Sepulchre to worship for Easter, although it is customary for thousands more to enter the church in celebration on this day. Furthermore, the police have said that they will allow only 500 people to enter the Christian Quarter and the overlooking roof of the church courtyard.

The Heads of Churches responsible for the Holy Sepulchre and forming the Status Quo Committee express deep concern and disagreement to this unfair and unexplainable decision that limits the rights of Christian pilgrims to worship freely on our faith's most important day of the year. This holy service of worship, achieved through careful and prayerful collaboration among the churches, has been ongoing for centuries; and overcrowding has never been an issue or gave rise to concerns about safety or security.

The worldwide Christian community interprets these restrictions as unfairly targeting the Christian minority. The Status Quo Committee is committed to a safe ceremony and requests that Israel upholds its standards of the right to worship to allow Christians to celebrate the Resurrection of Christ without restriction or limitation.

The Status Quo Committee calls on Israel to secure the right of the churches to practice their customs and ceremonies as usual and allow Christian pilgrims to freely enter the Old City and journey to the Church of the Holy Sepulchre. After a challenging two years of various and at times severe restrictions due to the pandemic, it is vital that all communities are once again allowed to worship freely and without constraints.

We are confident of Your Excellency's wise intervention on our behalf and we take this opportunity to extend to Your Excellency a Hag Pesach Sameach, may you spend it in health and happiness with you family and loved ones.

With our best personal greetings.

Theophilos III - Greek Orthodox Patriarch of Jerusalem

Father Francesco - Custos of the Holy Land Patton

Abp. Nourhan Manougian - Armenian Patriarch of Jerusalem

Holy City of Jerusalem

Thursday, 18th April, 2022